

ՀԱՎԵԼՎԱԾ  
ՀՀ փաստաբանական ակադեմիայի  
ռեկտորի 2022 թվականի  
դեկտեմբերի 01-ի 140-Լ հրամանի



**ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ  
ԾՐԱԳՐԵՐԻ ԴԱՍԻՉՆԵՐԸ**

1. Մասնագիտական դասիչով նշվում են այն առարկայական ծրագրերը, որոնք տրամադրում են «Հայաստանի Հանրապետության փաստաբանական ակադեմիա» հիմնադրամում (**այսուհետ՝ ՀՀ փաստաբանական ակադեմիա**) իրականացվող մասնագիտացված հոսքերի (քրեաիրավական կամ քաղաքացիաիրավական (վարչաիրավական)) ուսուցման ծրագրերում ներառված, տվյալ իրավունքի ճյուղի կամ դրա առանձին ինստիտուտի վերաբերյալ գիտելիքներ և հմտություններ:

Մասնագիտական դասիչները բաժանվում են երեք խմբի՝ **(1) քրեաիրավական, (2) քաղաքացիաիրավական (վարչաիրավական) և (3) ընդհանուր մասնագիտական:**

2. Քրեաիրավական մասնագիտացման հոսքի ուսուցման ծրագրում ներառված Քրեական իրավունքից կամ քրեական դատավարությունից բխող կամ դրանց հարակից իրավունքի ճյուղերի առանձին ինստիտուտներին վերաբերող առարկայական ծրագրերի դասիչը սահմանվում է հետևյալ կերպ. նշվում են «ՔՐ» տառերը «գծիկ» և հերթական համար՝ զրոից սկսած երկնիշ թվով: (օրինակ՝ ՔՐ-01):

**Քրեաիրավական մասնագիտական դասիչները ներկայացված են ստորև աղյուսակով.**

Հ/հ	Դասիչ	Հակիրճ բովանդակություն
1.	ՔՐ-01	Պաշտպանի մասնակցությունը մինչդատական քրեական վարույթում

		<p>Ներառում է պաշտպանի՝ քննչական և այլ դատավարական գործողությունների մասնակցության իրավական հիմքերը: Քրեական գործով փաստաբանի ներգրավման հիմքերն ու կարգը: Քննչական գործողությունների տեսակները, պաշտպանի՝ դրանցից յուրաքանչյուրին մասնակցության առանձնահատկությունները և մարտավարության որոշումը: Պաշտպանի կողմից նյութեր ձեռք բերելու իրավունքը, կարգը: Մասնավոր անձանց հարցման ենթարկելը, դրա արձանագրումը: Ձեռք բերված նյութերը քրեական գործին կցելու կարգը: Մինչդատական վարույթի ընթացքում հիմնականում կազմվող միջնորդությունների կազման ու ներկայացման ժամանակի նպատակահարմարությունը, այդ փաստաթղթերի հասցեատերերը: Պաշտպանյալին վերագրվող արարքի քրեաիրավական որակումը վիճարկելու հմտությունները:</p>
2.	<b>ՔՐ-02</b>	<p><b>Խափանման միջոց կալանք ընտրելու միջնորդության քննարկման ընթացակարգերը առաջին ատյանի դատարանում և դատական ակտի բողոքարկումը</b></p> <p>Որպես խափանման միջոց կալանավորումն ընտրելու պայմանները: Հիմնավոր կասկածի հասկացությունը, շեմը: Կալանավորումն ընտրելու հիմքերը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից սահմանված չափանիշները: Խափանման միջոց կալանավորումն ընտրելու միջնորդության քննությունը: Կալանքի տակ պահելու ժամկետի երկարացումը: Ապացուցման շեմը քննության տարբեր փուլերում: Քննիչի միջնորդության քննարկման ժամանակ պաշտպանական կողմի իրավունքները: Դատարանի որոշման վերլուծությունը, բողոքարկումը: Բողոք կազմելու հետ կապված հմտություններ: Որպես խափանման միջոց կալանքն ընտրելու, ինչպես նաև կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու օրինականության և հիմնավորվածության դատական ստուգման ընթացակարգն ու սահմանները:</p>
3.	<b>ՔՐ-03</b>	<p><b>Մինչդատական ակտերի իրավաչափության դատական բողոքարկումը</b></p> <p>Ընդհանուր դրույթներ մինչդատական ակտերի իրավաչափության երաշխիքների շրջանակի վերաբերյալ: Կախված ձերբակալման տեսակից՝ պաշտպանական իրավունքների արդյունավետ իրականացման նպատակով ձերբակալման արձանագրության կամ որոշման բողոքարկման առանձնահատկությունները: Ենթադրյալ հանցագործության մասին հաղորդումն արձանագրելուց կամ քրեական վարույթ նախաձեռնելուց հրաժարվելու մինչդատական ակտերի բողոքարկման հիմնական խնդրահարույց հարցերը, ինչպես նաև դրանք բողոքարկելիս ուշադրության արժանի հանգամանքները: Քրեական հետապնդումը դադարեցնելու, հետապնդում չհարուցելու, քրեական հետապնդումը կասեցնելու, քրեական հետապնդումը նորոգելու մասին որոշումների բողոքարկման ընթացակարգերը, դրանց առանձնահատկությունները: Ապացուցողական գործողությունների</p>

		<p>կատարման դատական երաշխիքների շրջանակներում կայացված որոշումների բողոքարկման առանձնահատկությունները: Քրեական հետապնդման մարմնի՝ գործողության և անգործության սահմանազատման առանձնահատկությունները, դրանց բողոքարկման իրավական կառուցակարգերի տարբերությունները:</p>
4.	<b>ՔՐ-04</b>	<p><b>Ապացույցները և ապացուցումը քրեական վարույթում</b></p> <p>Ապացույցների հասկացությունը, ապացույցների տեսակները, դասակարգումը: Ապացուցման հասկացությունը: Քրեական դատավարությունում ապացուցման ենթակա հանգամանքները: Հանգամանքներ, որոնք կարող են ապացուցվել միայն որոշակի ապացույցներով: Յուրաքանչյուր ապացույցի ձեռք բերման հետ կապված քրեադատավարական պահանջները: Պաշտպանական նյութեր ձեռք բերելը, դրանց վերածումն ապացույցների: Քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում սահմանված ապացույցները, ապացուցման առանձնահատկությունները: Ապացույցների վերաբերելիության սահմանումը, անվերաբերելի ապացույցներ: Ապացույցների թույլատրելիության սահմանումը: Ապացույցների բավարարության չափանիշները: Խախտումներ, որոնք հանգեցնում են ձեռք բերված նյութի՝ որպես ապացույց օգտագործման անթույլատրելիության: Պաշտպանական և մեղադրական ապացույցների անթույլատրելիության դեպքերի տարանջատումը: Ապացույցների հավաստիության /արժանահավատության/ չափանիշը, դրա գնահատումը վարույթն իրականացնող մարմնի կողմից, պաշտպանի դերը ապացույցների հավաստիության գնահատման հարցում:</p>
5.	<b>ՔՐ-05</b>	<p><b>Փորձաքննությունների կատարումը, դրանց տեսակները և փաստաբանի իրավասությունները փորձաքննություններ կատարելիս</b></p> <p>Հատուկ գիտելիքների քրեադատավարական հասկացությունը: Հատուկ գիտելիքների կիրառման ձևերի գործնական առանձնահատկությունները: Փորձագետի դատավարական կարգավիճակը և ձեռնահաստությունը: Փորձագիտական հիմնարկների համակարգը ՀՀ-ում: Քրեական գործերով միջազգային իրավական համագործակցության հիմնախնդիրները դատական փորձաքննությունների ոլորտում: Դատական փորձաքննությունների տարբեր տեսակների նախապատրաստման գործնական հնարքները: Փորձագետի եզրակացության գնահատման չափանիշներն ու եղանակները: Դատական փորձաքննությունների տարբեր տեսակների արդյունքների առանձնահատկություններն ապացույցների գնահատման պրոցեսում: Պաշտպանական կողմի լիազորությունները դատական փորձաքննությունների նշանակման և կատարման ոլորտում: Պաշտպանական կողմի լիազորությունները գործնական հիմնախնդիրները դատական փորձաքննությունների նշանակման ու ընթացքում: Դատական փորձաքննությունների ինստիտուտն ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նոր նախագծի: Փորձագետի</p>

		եզրակացությունը և փորձագիտական կարծիքը քրեական դատավարությունում:
6.	<b>ՔՐ-06</b>	<p><b>Հարցաքննության ձևերն ու առանձնահատկությունները</b></p> <p>Հարցաքննության տեսակները, կարգը: Գործնականում հանդիպող խնդիրները, ինչպես նաև՝ հարցաքննության արդյունքում կազմվող արձանագրության բովանդակությունը: Վկայի և տուժողի հարցաքննությունների հիմքերը, կարգը, առանձնահատկությունները, ինչպես նաև՝ անչափահաս վկայի կամ տուժողի, խույ, համր կամ կույր, այլ ծանր հիվանդությամբ տառապող վկայի հարցաքննության առանձնահատկությունները և այլն: Կասկածյալի, մեղադրյալի և դատապարտյալի հարցաքննության հիմքերը, կարգը, առանձնահատկությունները և այլն: Առերեսման էությունը, առերեսման առանձնահատկություններն ըստ դրան մասնակցող սուբյեկտների դատավարական կարգավիճակներից բխող առանձնահատկությունների, առերեսման արձանագրման առանձնահատկությունները և այլն: Հակընդեմ հարցման իրավունքի ապահովումը: Դեպոնացման էությունը, նպատակը, դրական և բացասական կողմերը և այլն: Բացատրության էությունը, նշանակությունը, այն վերցնելու հիմքերը, բացարության և ցուցմունքի տարբերությունը, բացատրության ապացուցողական նշանակությունը և այլն: Բացատրության և ցուցմունքի հարաբերակցությունը:</p>
7.	<b>ՔՐ-07</b>	<p><b>Օպերատիվ-հետախուզական գործունեություն. ապացույցներ</b></p> <p>Օպերատիվ-հետախուզական միջոցառումների տեսակները, դրանց կիրառման հիմքերն ու կարգը, դրանք իրականացնող մարմինները: Օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ձեռք բերվող նյութերի ամրագրումը, այդ նյութերի ներկայացումը նախաքննությանը և դրանց ապացուցողական նշանակությունը: Գործնականում դրանց կիրառման հնարավորությունները: Օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ձեռք բերված նյութերի ապացուցողական նշանակության, դրա վերաբերյալ գործնականում ծագող խնդիրների և ՀՀ օրենսդրությամբ դրանց լուծումները:</p>
8.	<b>ՔՐ-08</b>	<p><b>Քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքները</b></p> <p>Անմեղսունակության, առանց մեղքի վնաս պատճառելու, նյարդահոգեկան ծանրաբեռնվածության վիճակում քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելու օրենսդրական կարգավորումը, իրավաչափության պայմանները, հարաբերակցությունը քրեական պատասխանատվությունը բացառող այլ հանգամանքների հետ, հնարավոր իրավակիրառ խնդիրները: Անհրաժեշտ պաշտպանության իրավաչափության պայմանները, հարաբերակցությունը քրեական պատասխանատվությունը բացառող այլ հանգամանքների հետ, հնարավոր իրավակիրառ խնդիրները: Հակաիրավական ոտնձգություն կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու իրավաչափության</p>

		<p>պայմանները, հարաբերակցությունը քրեական պատասխանատվությունը բացառող այլ հանգամանքների հետ: Ծայրահեղ անհրաժեշտության, անհաղթահարելի ուժի, ֆիզիկական կամ հոգեկան հարկանդրանքի իրավաչափության պայմանները, հարաբերակցությունը քրեական պատասխանատվությունը բացառող այլ հանգամանքների հետ: Հիմնավորված ռիսկի, մասնագիտական գործառույթների իրականացման, սպորտային ռիսկի իրավաչափության պայմանները, հարաբերակցությունը քրեական պատասխանատվությունը բացառող այլ հանգամանքների հետ:</p> <p>Օրենքի կամ իրավական այլ ակտերի պահանջները կատարելու, հրաման կամ կարգադրություն կատարելու, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ համագործակցելու իրավաչափության պայմանները, հարաբերակցությունը քրեական պատասխանատվությունը բացառող այլ հանգամանքների հետ: Հնարավոր իրավակիրառ խնդիրները:</p>
9.	<b>ՔՐ-09</b>	<p><b>Հանցագործությունների որակման հիմնախնդիրները</b></p> <p>Հանցագործությունների որակման գիտական և գործնական առանձնահատկությունները: ՀՀ վճռաբեկ դատարանի՝ հանցագործությունների որակման առնչվող նախադեպային դիրքորոշումները: ՀՀ քրեական նոր օրենսգրքում ամրագրված հանցագործությունների որակման կանոնների բնութագիրը և համեմատական վերլուծությունը ՀՀ գործող քրեական օրենսգրքում առկա դրույթների հետ: Հանցագործությունների որակման հմտությունները:</p>
10.	<b>ՔՐ-10</b>	<p><b>Մասնավոր մեղադրանքով վարույթը</b></p> <p>Մասնավոր մեղադրանքի էությունը: Տուժողը որպես մասնավոր մեղադրող: Մասնավոր մեղադրանքով վարույթ նախաձեռնելը: Քրեական հայց: Մասնավոր մեղադրանքով նախնական և հիմնական դատալսումներ:</p>
11.	<b>ՔՐ-11</b>	<p><b>Պաշտպանի մասնակցությունը դատական քննության փուլում</b></p> <p>Նախապատրաստական փուլի դերն ու նշանակությունը: Նախապատրաստական փուլում ապացույցներ պահանջելը և դրա մարտավարական առանձնահատկությունները: Այս փուլում արվող միջնորդությունները և դրանց նշանակությունը: ատական քննության փուլում հիմնական գործածվող մարտավարական հնարքներ: Քրեական գործի դատական քննության ժամանակ ճիշտ ժամանակին այս կամ այն գործողությունը կատարելու կամ կատարելուց ձեռնպահ մնալու անհրաժեշտությունը: Այս կամ այն գործողությունը կատարելիս ճիշտ մարտավարություն ընտրելը՝ առաջադրված նպատակներին հասնելու տեսանկյունից: Առարկություններ, միջնորդություններ և այլն: Դատական վիճաբանությունների փուլը, դրա նշանակությունը: Պաշտպանական ճառի նշանակությունը, դրան ներկայացվող պահանջները:</p>

12.	<b>ՔՐ-12</b>	<p><b>Անչափահասների արդարադատությունը</b></p> <p>Անչափահասների նկատմամբ կիրառվող դատավարական հարկադրանքի միջոցներ. ՀՀ օրենսդրական կանոնակարգում, միջազգային ուղեւիշեր: ՀՀ դատական և ՄԻԵԴ պրակտիկա: Անչափահասների նկատմամբ կալանքի կիրառման գործընթացի առանձնահատկությունները: Անչափահասների նկատմամբ ազատությունից զրկելուն այլընտրանք հանդիսացող դատավարական հարկադրանքի միջոցների կիրառման հնարավորությունները: Անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի հարցաքննության առանձնահատկությունները: Անչափահասների քրեական գործերով պաշտպանի մասնակցությունը որպես նշված անձնաց իրավունքների պաշտպանության երաշխիք: Քրեական դատավարության տարբեր փուլերում օրինական ներկայացուցչի մասնակցությունը ապացուցման գործընթացին: Անչափահասի վարույթում հոգեբանի մասնակցությունը և նրա դատավարական վիճակը: Անչափահասների վերաբերյալ քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործով վարույթը կարճելու առանձնահատկությունները: Անչափահաս տուժողի իրավունքների ապահովման առանձնահատկությունները հանցագործության մասին հաղորդումների ստուգման (նյութերի նախապատրաստում) ընթացքում: Երեխաների մասնակցությամբ քննչական և դատական գործողությունների առանձնահատկությունները և նրանց իրավունքների և օրինական շահերի ապահովման հարցերը: Անչափահասների հակընդդեմ հարցման իրավունքի ապահովման առանձնահատկությունները: Անչափահասների ցուցմունքների գնահատումը:</p>
13.	<b>ՔՐ-13</b>	<p><b>Զինվորական գործերով քննության առանձնահատկությունները</b></p> <p>Զինվորական հանցագործությունների օբյեկտը և սուբյեկտը: Հանցագործությունների և զինվորական կարգապահական խախտումների/զանցանքների տարբերությունները: Ոլորտը կարգավորող օրենսդրական խնդիրները և վստահորդների շահերի պաշտպանության առումով դրանց հաղթահարման մեթոդները: Դատական պրակտիկայում հանդիպող խնդիրների: Զինվորական հանցագործությունների քննության, որակման հետ կապված ՀՀ վճռաբեկ դատարանի և ՄԻԵԴ նախադեպային նշանակության որոշումները: Զինվորական հանցագործություններով պաշտպանների և տուժողների ներկայացուցիչներ փաստաբանների կողմից հաճախ թույլ տրվող սխալներ, ինչպես նաև այդ սխալներից խուսափելու առաջարկություններ և մարտավարական հնարքներ:</p>
14.	<b>ՔՐ-14</b>	<p><b>Արդար դատաքննությունը, ազատությունն ու անձնական անձեռնմխելիությունը ՄԻԵԿ լուսի ներքո</b></p> <p>Կալանավորման օրինականության սկզբունքը: ԽՄԿ ՄԻԵԿ և ազգային իրավական կառուցակարգերը: ՄԻԵԿ 5-րդ հոդված: ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդված: ՀՀ Քր. դատ. 18-րդ գլուխ: Վճռաբեկ</p>

		<p>դատարանի նախադեպեր: Արդարացի դատաքննության իրավունքին առնչվող ՄԻԵԿ այլ իրավունքներ: Ընդդեմ ՀՀ-ի կայացված վճիռների ամփոփ ներկայացում: Ապացույցի գնահատումը ըստ ՄԻԵԿ-ի: Միակ կամ վճռորոշ կանոն: Հակակշռող գործոններ: Ողջամիջ կասկածից վեր: Ապացույցի գնահատումը ըստ ՀՀ օրենսդրության: Համեմատական վերլուծություն: «Մեղադրանք» հասկացության ավտոնոմ մեկնաբանությունը: Դատավարության սկիզբը ըստ ՄԻԵԿ-ի: Գազիկ Միքայելյանի գործով Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքը և դրա համեմատական վերլուծությունը ՄԻԵԿ լույսի ներքո: «Խոշտանգում» հասկացությունը: ՄԻԵԿ երկու մոտեցումները: Գաֆգենն ընդդեմ Գերմանիայի գործը ՄԻԵԿ: Արա Գոլյանն ընդդեմ Հայաստանի (Վճռ. դատար.): Ատերեսում: Հակընդդեմ հարցման իրավունքը: Բացակայող վկա: Օպերատիվ հետախուզական միջոցառումներ: Հանցագործության սադրում:</p>
15.	<b>ՔՐ-15</b>	<p><b>Պատիժ նշանակելու առանձնահատկությունները դատական պրակտիկայում</b></p> <p>Ազատազրկման հետ չկապված պատժատեսակները: Ազատազրկման հետ կապված պատժատեսակները: Պատիժ նշանակելու սկզբունքների հասկացությունը: Պատժի տեսակը և չափը որոշելու օրենսդրական հիմքերը: Առավել խիստ պատիժ նշանակելու օրենսդրական սահմանափակումը: Օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու օրենսդրական հիմքերը: Բացառիկ հանգամանքների հասկացությունը և նշանակությունը: Օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու դրսևորման տարբերակները: Պատիժը հաշվարկելու կարգը: Պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքը և իրավական բնույթը: Հանցավորի անձը բնութագրող տվյալները, ինչպես նաև պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները հաշվի առնելը որպես պատիժը պայմանականորեն չկիրառելու նախապայման: Չավարտված հանցագործության համար պատիժ նշանակելու սկզբունքները և կանոնները: Պատիժ նշանակելը հանցանքների և դատավճիռների համակցությամբ: Պատիժ նշանակելը հանցագործությունների ռեցիդիվի դեպքում: Պատիժ նշանակելը անչափահաս, կին հանցագործի նկատմամբ: Պատիժ նշանակելը հանցանքը հանցակցությամբ կատարած անձի նկատմամբ: Պատիժ նշանակելը հանցանքը խմբի կազմում կատարած անձի նկատմամբ:</p>
16.	<b>ՔՐ-16</b>	<p><b>Վերաքննիչ և վճռաբեկ բողոք կազմելու գործնական հմտությունները</b></p> <p>Ընդհանուր դրույթներ վերաքննիչ վարույթի վերաբերյալ: Ինչ ծավալով կարող է ներկայացվել վերաքննիչ բողոքը: Վերաքննիչ բողոքները քննող դատարանը: Բողոքարկման ժամկետի վերականգնումը: Վերաքննիչ բողոքի ձևին և բովանդակությանը օրենքով առաջադրվող պահանջներ, դրանց բովանդակության բացահայտում: Դատական սխալի հատկանիշները: Գործի նյութերը, առաջին ատյանի դատարանի դատական ակտը ուսումնասիրելու, դատական սխալ վերհանելու և</p>

		<p>վերաքննիչ բողոք կազմելու հետ կապված հմտություններ: Գործի քննության սահմանները: Ընդհանուր դրույթներ վճարել վարույթի վերաբերյալ: Վճարել բողոքը վարույթ ընդունելու հետ կապված խնդիրներ: Վճարել բողոքի ձևին և բովանդակությանը օրենքով առաջադրվող պահանջներ: Վարույթն ընդունելու հիմնավորումները: Բողոքարկվող դատական ակտը ուսումնասիրելու, վճարել բողոք կազմելու հետ կապված հմտություններ:</p>
17.	<b>ՔՐ-17</b>	<p><b>Քրեակատարողական փուլի առանձնահատկությունները</b></p> <p>Ներառում է քրեակատարողական փուլում առաջացող խնդիրներն ու դրանց լուծման հնարավոր տարբերակները: Պրոբացիայի ծառայության դերն ու նշանակությունը: Պատժից պայմանական վաղաժամկետ ազատման փուլի առանձնահատկությունները: Փաստաբանական միջամտության հնարավորությունները քրեակատարողական փուլում:</p>
18.	<b>ՔՐ-18</b>	<p><b>Պաշտպանությունը հարկային ոլորտի հանցագործությունների գործերով</b></p> <p>«Հարկերի մասին» և առանձին հարկատեսակների մասին ՀՀ օրենքներով նախատեսված հարկային իրավախախտումների հասկացությունը, հարկային իրավախախտման տարրերը, տեսակները, հարկային իրավախախտումների համար նախատեսված պատասխանատվությունը, ինչպես նաև հարկային իրավախախտումների հետ կապված ՀՀ օրենսդրության մեջ առկա բացերը, երկիմաստություններն ու տարրնթեցումները: «Հարկերի մասին» ՀՀ օրենքով նախատեսված հարկային իրավախախտումների վերլուծություն: Հարկային ոլորտի հանցագործությունների ընդհանուր նկարագիր: Սահմանազատումը այլ իրավախախտումներից: Հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց չարամտորեն խուսափելու հանցակազմի քննության առանձնահատկությունները: Ապօրինի ձեռնարկատիրության և առանց լիցենզիայի արտարժույթի առուվաճառքի իրականացման հանցակազմերի քննության առանձնահատկությունները: Կեղծ ձեռնարկատիրության քննության առանձնահատկությունները: Կանխամտածված և կեղծ սնանկության հացակազմերի քննության առանձնահատկությունները: Հարակից հանցակազմերի քննության առանձնահատկությունները: Պաշտպանության ժամանակ ուշադրության արժանի հանգամանքներ, պաշտպանության արդյունավետ միջոցներ:</p>



**3. Քաղաքացիաիրավական (վարչաիրավական) մասնագիտացման** հոսքի ուսուցման ծրագրում ներառված Քաղաքացիական իրավունքից կամ Քաղաքացիական դատավարությունից (ներառյալ վարչական իրավունք և դատավարություն) բխող կամ դրանց հարակից իրավունքի ճյուղերի առանձին ինստիտուտներին վերաբերող առարկայական ծրագրերի դասիչը սահմանվում է հետևյալ կերպ. նշվում են «ՔՎ» տառերը «գծիկ» և հերթական համար՝ գրոհից սկսած երկնիշ թվով: (օրինակ՝ ՔՎ-01):

**Քաղաքացիաիրավական (վարչաիրավական) մասնագիտական** դասիչները ներկայացված են ստորև աղյուսակով.

Հ/հ	Դասիչ	Հակիրճ բովանդակություն
1.	ՔՎ-01	<p><b>Ներկայացուցչությունը քաղաքացիական դատավարությունում</b></p> <p>Ներառում է հայցային վարույթով քննվող գործերի դատավարության փուլերի առանձնահատկությունները, այդ թվում՝ գործը դատաքննության նախապատրաստելու, ապացուցման պարտականությունների բաշխման և դատաքննության ժամանակ: Փաստաբանի ներկայացուցչության առանձնահատկությունները:</p>
2.	ՔՎ-02	<p><b>Դատավարական փաստաթղթերի կազմման հմտություններ</b></p> <p>Հայցադիմումը որպես դատավարական փաստաթուղթ, դրա նշանակությունը: Հայցադիմումի կառուցվածքն ու տարրերը: Հայցի ներածական մասը, հայցի հիմքը և առարկան: Հայցի հիմքի և առարկայի փոփոխությունը, կարգը: Հայցադիմումին կցվող փաստաթղթերը, դրանց նշանակությունը: Հայցի դեմ պատասխանողի պաշտպանության միջոցների տեսակների հասկացությունը, կառուցվածքը, կազմման հմտություններ: Հայցադիմումի պատասխանի ներկայացման պարտականությունը, ժամկետները, ժամկետի երկարաձգումը: Հայցադիմումի պատասխանում ներառվելիք տեղեկատվության ծավալը: Մարտավարական հնարքներ հայցադիմումի պատասխան կազմելիս: Հայցադիմումի պատասխան չներկայացնելը, դրա հետևանքները: Առարկություններ ներկայացնելը: Հայկընդդեմ հայցը՝ որպես դատավարական փաստաթուղթ: հասկացությունը, կառուցվածքը, հակընդդեմ հայցի ներկայացման հիմքերը, սահմանափակումները: Այլ դատավարական փաստաթղթերի ներկայացում ու քննարկում: Միջնորդություններին, փաստաբանին տրվող լիազորագրին առաջադրվող պահանջներ, կազմման հմտություններ:</p>
3.	ՔՎ-03	<p><b>Ապացույցները և ապացուցման գործընթացը քաղաքացիական դատավարությունում</b></p> <p>Ապացույցների դասակարգումը քաղաքացիական դատավարությունում: Քաղաքացիական դատավարությունում ապացուցման միջոցների առանձին տեսակներ: Վկայի ցուցմունքի գործնական կիրառության</p>

		<p>բացահայտում: Վկայի ուղիղ և առերես հարցաքննությունների ձևեր: Գրավոր ապացույցի գործնական կիրառության բացահայտում: Փաստաթղթի բնօրինակի և պատճենի կիրառությունը: Էլեկտրոնային եղանակով փաստաթղթերը որպես ապացույց: Կեղծ գրավոր փաստաթուղթ: Իրեղեն ապացույցի գործնական կիրառության բացահայտումը: Լուսանկարները (լուսաժապավենները), ձայնագրություններն ու տեսագրությունները: Ապացույցի թույլատրելիության պայմանները: Փորձագետի եզրակացություն: Մասնագետի բացատրություն: Լրացուցիչ և կրկնակի փորձաքննություն նշանակելու դեպքերը և կարգը: Գործին մասնակցող անձի ներկայացրած փորձագետի եզրակացությունը: Ապացուցման առարկան և ապացույց ներկայացնելու պարտականությունը: Ապացուցելուց ազատելու հիմքերը: Հանրահայտ փաստեր, նախադատելի փաստեր, նոտարական գործողության արդյունքով նոտարի հաստատած փաստեր և անվիճելի փաստեր: Ապացույցների վերաբերելիության, թույլատրելիության և արժանահավատության հասկացությունների բացահայտում: Ապացույցների հետազոտման և գնահատման ընթացակարգերի ուսումնասիրություն և վերլուծություն:</p>
<p>4.</p>	<p><b>ՔՎ-04</b></p>	<p><b>Բողոքարկումը քաղաքացիական դատավարությունում (գործնական հմտություններ)</b></p> <p>Ընդհանուր դրույթներ վերաքննիչ վարույթի վերաբերյալ: Վերաքննիչ բողոք ներկայացնող սուբյեկտները, ժամկետները: Բողոքարկման ժամկետի վերականգնումը: Վերաքննիչ բողոքի ձևին և բովանդակությանը օրենքով առաջադրվող պահանջներ, դրանց բովանդակության բացահայտում: Դատական սխալի հատկանիշները: Առաջին ատյանի դատարանի դատական ակտը ուսումնասիրելու, դատական սխալը վերհանելու և վերաքննիչ բողոք կազմելու հետ կապված հմտություններ: Բողոքի քննության սահմանները: Վերաքննիչ բողոքի պատասխանը, դրա դերն ու նշանակությունը: Ընդհանուր դրույթներ վճարել վարույթի վերաբերյալ: Վճարել բողոքը վարույթ ընդունելու հետ կապված խնդիրներ: Վճարել բողոքի ձևին և բովանդակությանը օրենքով առաջադրվող պահանջներ: Բողոքը վարույթ ընդունելու հիմնավորումները: Բողոքարկվող դատական ակտը ուսումնասիրելու, վճարել բողոք կազմելու հետ կապված հմտություններ:</p>
<p>5.</p>	<p><b>ՔՎ-05</b></p>	<p><b>Հատուկ վարույթի գործեր</b></p> <p>Հատուկ վարույթների իրականացման կարգը: Հատուկ վարույթի կարգով քննվող գործերը: Իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման վերաբերյալ քննվող գործերի առանձնահատկությունը: Հատուկ վարույթի այլ տեսակներ: Յուրաքանչյուր տեսակի գործով դիմումին առաջադրվող պահանջները: Հատուկ վարույթի գործերով դատավարության առանձնահատկությունները:</p>
<p>6.</p>	<p><b>ՔՎ-06</b></p>	<p><b>Ներկայացուցչությունը վարչական դատավարությունում</b></p>

		<p>Հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարանջատման չափանիշները: Վարչական դատավարության սկզբունքների հասկացությունն ու կիրառումը: Ապացուցման բեռի բաշխումը, հայցի ապահովման հասկացությունն ու կիրառելիությունը: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված հայցի հասկացությունը, տարրերը, տեսակները, դրանց առանձնահատկությունները, տարբերակման հիմքերը և նշված ոլորտում առկա խնդիրները: Վիճարկման հայց: Պարտավորեցման հայց: Գործողության կատարման հայց: Ճանաչման հայց: Փաստաբանի մասնակցության առանձնահատկությունները դատական նիստի նախապատրաստական մասում, համապատասխան միջնորդություններ, հայցադիմումի պատասխան կամ հակընդդեմ հայց ներկայացնելը: Գործի դատական քննությանը փաստաբանի մասնակցության առանձնահատկությունները: Բողոքին ներկայացվող պահանջներ, վերաքննիչ և վճռաբեկ բողոքները և դրա նախապատրաստման առանձնահատկությունները: Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթ: Հավաքի անցկացման մասին որոշումների վիճարկման վարույթ: Ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերի վարույթ: Դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերի վարույթ: Լիզենզիայի հետ կապված վեճերի վարույթ: Նոտարական գործողությունների վիճարկման վարույթ: Անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա գումարի բռնագանձման վարույթ: Դատավորների գնահատման հանձնաժողովի որոշումների վիճարկման վարույթ</p>
7.	<b>ՔՎ-07</b>	<p><b>Ներկայացուցչությունը սնանկության գործերով</b></p> <p>Անվճարունակության և սնանկության հասկացությունը, դրանց հարաբերակցությունը: Սնանկության չափանիշների հասկացությունը և դասակարգումը: Սնանկության հատկանիշների հասկացությունը և դասակարգումը: Սնանկության վարույթը որպես դատավարության տարբերակված ձև: Սնանկության վարույթի ծագման նախադրյալները (օբյեկտային, սուբյեկտային, ձևական նախադրյալներ): Սնանկության սուբյեկտների իրավական կարգավիճակը: Սնանկության վարույթի հարուցման կարգը: Սնանկության գործերի քննության դատավարական կարգը: Սնանկության վարույթում կիրառվող ընթացակարգերը: Սնանկության վարույթի ավարտը: Սնանկության վարույթի առանձին ընթացակարգեր (ֆինանսական առողջացում, պարտապանի լուծարում, պարտապանի գույքի վաճառք և այլն):</p>
8.	<b>ՔՎ-08</b>	<p><b>Ներկայացուցչությունը աշխատանքային վեճերով</b></p> <p>Աշխատանքային հարաբերությունների հասկացությունը և էությունը: Աշխատանքային հարաբերությունների տարանջատումը աշխատանքների կատարմամբ զուգորդվող քաղաքացիական հարաբերություններից: Աշխատանքային պայմանագրի հասկացությունը, տեսակները, բովանդակությունը: Համատեղությամբ աշխատանքային պայմանագիր:</p>

		<p>Որոշակի ժամկետով կնքվող աշխատանքային պայմանագրի առանձնահատկությունները: Աշխատանքային հարաբերությունների դադարման ընդհանուր հիմքերը: Աշխատաժամանակի հասկացությունը, կառուցվածքը: Նորմալ, կրճատ և ոչ լրիվ աշխատաժամանակ: Հանգստի ժամանակի հասկացությունը և կառուցվածքը: Ամենամյա վճարովի արձակուրդ, լրացուցիչ և երկարացված արձակուրդներ: Չօգտագործված ամենամյա արձակուրդներ: Նպատակային արձակուրդներ: Աշխատավարձի հասկացությունը: Աշխատավարձի չափի որոշման և վճարման կարգը: Գործատուի ներքին իրավական ակտերը: Ներքին կարգապահական կանոններ: Խրախուսանքի միջոցներ: Կարգապահական տույժերի հասկացությունը և համակարգը: Կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն ու կարգը: Նյութական պատասխանատվության հիմքերն ու կարգը:</p>
<p>9.</p>	<p><b>ՔՎ-09</b></p>	<p><b>Ներկայացուցչությունը ամուսնաընտանեկան հարաբերությունների ծագող վեճերով</b></p> <p>Ամուսնության դադարման հիմքերը: Ամուսնալուծության կարգը: Դատական կարգով ամուսնալուծության դեպքերը: Ամուսնալուծվելիս ամուսինների միջև ծագող վեճերով հայցի հարուցումը: Գործնական խնդիրների ներկայացում և վերլուծություն: Ծնողների և երեխաների իրավունքների ու պարտականությունների ծագման հիմքը: Երեխաների ապրուստը հոգալու՝ ծնողների պարտականությունը: Երեխաների համար դատական կարգով բռնազանձվող ալիմենտի չափը: Երեխաների համար ալիմենտի բռնազանձումը կայուն դրամական գումարով: Ծնողների մասնակցությունը երեխաների համար կատարվող լրացուցիչ ծախսերին: Դատարանի սահմանած ալիմենտի չափը փոփոխելը և ալիմենտ վճարելուց ազատելը: Գործնական խնդիրների ներկայացում և վերլուծություն: Ծնողների իրավունքների ու պարտականությունների հավասարությունը: Երեխաներին դաստիարակելու և կրթություն տալու՝ ծնողների իրավունքներն ու պարտականությունները: Երեխաների իրավունքները և շահերը պաշտպանելու՝ ծնողների իրավունքներն ու պարտականությունները: Ծնողական իրավունքների իրականացումը: Երեխաների դաստիարակությանն ու կրթությանը վերաբերող հարցերով դատարան դիմելու իրավունքը: Երեխաների բնակության վայրը որոշելու պահանջով դատարան դիմելու իրավունքը: Ծնողական իրավունքների պաշտպանությունը:</p>
<p>10.</p>	<p><b>ՔՎ-10</b></p>	<p><b>Ներկայացուցչությունը գործարքների անվավերությանը և դրա հետևանքներին վերաբերող վեճերով</b></p> <p>Գործարքի հասկացության օրենսդրական ձևակերպման և տեսական մոտեցումների վերլուծություն, «առոչինչ», «անվավեր» և «վիճահարույց» գործարքներ: Դրանց օրենսդրական կարգավորման վերլուծություն: Գործարքի հասկացությունը, գործարքի կնքման պահը, «առոչինչ գործարք», «անվավեր գործարք» և «վիճահարույց գործարք» հասկացությունների օրենսդրական ձևակերպումների վերլուծություն:</p>

		<p>Դրանց տարբերությունների ներկայացում: «Կեղծ գործարք» հասկացությունը, կեղծ գործարքի վերլուծություն: «Շինծու գործարք» հասկացությունը, շինծու գործարքի վերլուծություն: Գործարքի անվավերությունը. Գործարքի (մասի) անվավերության հետևանքները. միակողմ ռեստիտուցիա, երկկողմ ռեստիտուցիա, այլ հետևանքներ: Գործարքի սուբյեկտով պայմանավորված գործարքների անվավերությունը: Կամքի կամ կամահայտնության արատով պայմանավորված գործարքների անվավերությունը): Բովանդակությամբ պայմանավորված գործարքների անվավերությունը: Գործարքի ձևով պայմանավորված գործարքների անվավերությունը: «Գործարքի վերակենդանացում» հասկացությունը: Հայցային վաղեմության առանձնահատկությունները վիճահարույց գործարքներն անվավեր ճանաչելու հայցերով: Հայցային վաղեմության առանձնահատկություններն առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու հայցերով:</p>
11.	ՔՎ-11	<p><b>Ներկայացուցչությունը ժառանգական հարաբերություններում</b></p> <p>Ըստ օրենքի ժառանգման հարաբերությունների առանձնահատկությունները: Պարտատերերի կողմից պահանջներ ներկայացնելու ժամկետներն ու կարգը, իրավունքների ու պարտականությունների առանձնահատկությունները, դրանց առնչվող դատական պրակտիկայում ծագած խնդիրները: Նոտարի կողմից ժառանգության իրավունքի վկայագիր տրամադրելու կարգը: Վեճի առկայության դեպքում փաստաբանի կողմից ռազմավարության մշակումը, փաստաբանի կողմից ժառանգության իրավահարաբերությանն առնչվող և այդ ընթացքում այլ իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի արտադատական կարգով /նոտարական կարգով/ հաստատմանն ուղղված գործողությունների մշակումը: Փաստացի տիրապետման հիմքով ժառանգության ընդունման վերաբերյալ դատական պրակտիկան և դրա պաշտպանության հիմնական մեխանիզմները: Ըստ կտակի ժառանգության առանձնահատկությունները: Պարտադիր բաժնի իրավունք ունեցող ժառանգների իրավունքներն ու պարտականությունները, պարտադիր բաժնի իրավունքից հրաժարվելու առանձնահատկությունները: Սահմանված ժամկետը բաց թողնելու իրավական հետևանքները, դատական պրակտիկան: Բաց և փակ կտակի տարբերությունները, կտակի վերացման, ինչպես նաև հին կտակը նոր կտակով վերացնելու առանձնահատկությունները: Կտակի վիճարկման դեպքում փաստաբանի կողմից ռազմավարության մշակումը: Ժառանգությանը վերաբերող վեճերի իրավական կարգավորումներն ու վեճի շրջանակներում փաստաբանի կողմից ճիշտ ռազմավարական մեխանիզմների մշակումը և իրականացումը:</p>
12.	ՔՎ-12	<p><b>Ներկայացուցչությունը վարչական վարույթում</b></p> <p>Վարչարարության հասկացությունը, տեսակները: Վարչարարություն իրականացնող մարմինները: Վարչական վարույթի փուլերը: Առանձին տեսակի վարչական վարույթներ: Ապացուցման պարտականությունը</p>

		<p>վարչական վարույթում: Վարչական վարույթի իրականացման ժամկետը: Վարչական վարույթի եզրափակումը: Վարչարարության օրինականությունը: Ձևական պահանջները չարաշահելու արգելքը: Հայեցողական լիազորությունները սահմանափակելը: Կամայականության արգելքը: Վարչարարության համաչափությունը: Առավելագույնի սկզբունքը: Հավաստիության կանխավարրկածը: Տնտեսվարությունը: Վարչական վարույթի այլ սկզբունքները (հրապարակայնությունը, բանավորություն, անընդհատություն): Վարչական ակտի հասկացությունը, ընդունումը, ուժի մեջ մտնելը, տեսակները, ձևերը: Վարչական ակտերին (ըստ ձևի) ներկայացվող պահանջները: Վարչական ակտի հիմնավորվածությունը: Վարչական ակտն առ ոչինչ լինելու հիմքերը, Ոչ իրավաչափ վարչական ակտն անվավեր ճանաչելը: Ոչ իրավաչափ վարչական ակտն անվավեր ճանաչելու հետևանքները: Իրավաչափ վարչական ակտի ուժը կորցնելը:</p>
13.	ՔՎ-13	<p><b>Պարտավորական հարաբերություններից ծագած վեճերով գործնական առաջարկություններ</b></p> <p>Գործարքի հասկացությունը, գործարքների առանձնահատկությունները: Կամքը և կամահայտնությունը գործարքում, գործարքների տեսակները, ձևը, վավերության պայմանները: Պարտավորության հասկացությունը, տեսակները և տարրերը, դասակարգումը, ծագման հիմքերը, անձանց բազմաթիվությունն ու փոփոխությունը պարտավորության մեջ, ռեգրեսային պարտավորություններ, պարտավորության կատարումը, կատարման ապահովումը, պատասխանատվությունը պարտավորությունների չկատարման և ոչ պատշաճ կատարման համար, պարտավորությունների դադարումը: Պայմանագրի հասկացությունը և նշանակությունը, տեսակները, բովանդակությունը, ձևը, կքնման կարգը, փոփոխելը և լուծելը, վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորություններ, անհիմն հարստացման հետևանքով ծագող պարտավորություններ:</p>
14.	ՔՎ-14	<p><b>Սեփականության իրավունքի պաշտպանության ոլորտի վեճեր. բնակարանային և հողային վեճեր</b></p> <p>Պետական և հանրային բնակարանների սեփականաշնորհումը 1990-ականներին, վարձակալի ընտանիքի անդամների կազմը, բնակարանի նկատմամբ նրանց սեփականության իրավունքի ծագման հիմքը և դատական պաշտպանությունը: Ընդհանուր սեփականություն ընդհանուր բնութագիրը: Բնակարանի բաժնեմասի առանձնացումը կամ փոխհատուցմամբ դադարեցումը՝ ըստ քաղաքացիական օրենսդրության: Բնակարանի բաժնեմասի առանձնացումը կամ փոխհատուցմամբ դադարեցումը: Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ընդհանուր նկարագիրը, տարբերությունը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածով սահմանված ձեռքբերման վաղեմության ինստիտուտից: Պետական կամ համայնքային ենթակայության հողամասերն</p>

		<p>օգտագործողների իրավունքների պաշտպանության օրենսդրական հնարավորությունները և միջոցները: Տնամերձ հողամասերի սեփականաշնորհման և այլ բնույթի վեճեր: Հասարակության և պետության կարիքների համար հողամասի օտարման հետ կապված վեճերը:</p>
15.	ՔՎ-15	<p><b>Ներկայացուցչությունը տրանսպորտային միջոցների շահագործումից բխող վարչական իրավախախտման վերաբերյալ գործերով</b></p> <p>Տրանսպորտային միջոցների շահագործումից բխող վարչական իրավախախտումների հայտնաբերման եղանակները, գործի քննության ընթացքն ու առանձնահատկությունները: Տրանսպորտային միջոցների շահագործումից բխող վարչական իրավախախտման գործի քննության արդյունքում վարչական ակտ ընդունելը: Տրանսպորտային միջոցների շահագործումից բխող յուրաքանչյուր ձևով (ՃՏՊ գործի քննության շրջանակներում, ՃՊԾ տեսուչի կողմից, Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքով) հայտնաբերված վարչական իրավախախտման գործով վարչական ակտի բողոքարկման հիմքերն ու ժամկետները: Վերադասության կարգով բողոքը: Տրանսպորտային միջոցների շահագործումից բխող վարչական իրավախախտման վարաբերյալ որոշման բողոքարկման դատական հեռանկարը:</p>
16.	ՔՎ-16	<p><b>Իրավաբանական անձանց իրավական ուղեկցման գործնական հմտություններ</b></p> <p>Իրավաբանական անձանց կարգավիճակը և դրանց առանձնահատկությունները, ինչպես նաև կորպորատիվ հնարավոր խնդիրները դրանց վերհանման մեթոդաբանությունը և նշանակությունը: Տնտեսական մրցակցության պաշտպանության իրավական մեխանիզմները ՀՀ-ում, ոլորտում հնարավոր խնդիրները դրանց վերհանման մեթոդաբանությունը և նշանակությունը: Ֆինանսական ոլորտում գործնական առաջարկություններ: Կազմակերպության ոչ հարկային բնույթի հնարավոր ֆինանսական խնդիրները, տարածված պայմանագրերը, ինչպես նաև խնդիրների արտապայմանագրային լուծման մեխանիզմները: Կազմակերպության գործունեությունից ելնելով մտավոր սեփականության ոլորտում հնարավոր խնդիրները:</p>
17.	ՔՎ-17	<p><b>Ներկայացուցչությունը արբիտրաժում, միջազգային արբիտրաժում. մեդիացիա</b></p> <p>Արբիտրաժային քննության հասկացությունը, դրա հիմնական հատկանիշները, առանձնահատկություններն ու սկզբունքները, արբիտրաժում գործը քննելու իրավական նախադրյալները, արբիտրաժում կիրառելի իրավունքը (նյութական և/կամ ընթացակարգային) ընտրելու կողմերի ազատությունը և այլն: Արբիտրաժային համաձայնության հասկացությունը, տեսակները, վավերականությունը (կամ արդյունավետությունը): Արբիտրաժային տրիբունալի ակտերը, դրանց տեսակները: Արբիտրաժային վճիռների ճանաչումն ու կատարումը ՀՀ-ում: Արբիտրաժային միջազգային կենտրոններ: Արբիտրաժային վճիռների</p>

		կատարման առանձնահատկությունները ՀՀ-ում: Մեդիացիայի (Հաշտարարության) հասկացությունը, հատկանիշներն ու տեսակները: Վեճերի լուծման հարցում դրա կարևորությունը:
18.	ՔՎ-18	<p><b>Ներկայացուցչությունը հարկային իրավախախտումներից ծագող վեճերով</b></p> <p>Հարկային իրավախախտումների հասկացությունը, տարրերը, տեսակները: Հարկային իրավախախտումների համար նախատեսված պատասխանատվությունը, ինչպես նաև հարկային իրավախախտումների հետ կապված ՀՀ օրենսդրության մեջ առկա բացերը, երկիմաստություններն ու տարընթեցումները: ՀՀ հարկային օրենսգրքի 401-403-րդ հոդվածով նախատեսված հարկային իրավախախտումների վերլուծություն: ՀՀ հարկային օրենսգրքի 407-409-րդ հոդվածով նախատեսված հարկային իրավախախտումների վերլուծություն: ՀՀ հարկային օրենսգրքի 410-412-րդ հոդվածով նախատեսված հարկային իրավախախտումների վերլուծություն: ՀՀ հարկային օրենսգրքով նախատեսված հարկային այլ իրավախախտումների վերլուծություն:</p>



4. Ընդհանուր մասնագիտական դասիչով նշվում են սույն հավելվածի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված շրջանակից դուրս գտնվող այն առարկայական ծրագրերը, որոնք տրամադրում են փաստաբանի արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ (օժանդակ կամ լրացուցիչ) գիտելիքներ և հմտություններ:

Ընդհանուր մասնագիտական դասիչը սահմանվում է հետևյալ կերպ. նշվում են «ԸՄ» տառերը «գծիկ» և հերթական համար՝ գրոհից սկսած երկնիչ թվով: (օրինակ՝ ԸՄ-01):

Ընդհանուր մասնագիտական դասիչները ներկայացված են ստորև աղյուսակով.

Հ/հ	Դասիչ	Հակիրճ բովանդակություն
1.	ԸՄ-01	<p><b>Իրավաբանական գրագրություն և վերլուծություն</b></p> <p>Պաշտոնական (ոչ դատավարական բնույթի) փաստաթղթերին ներկայացվող հիմնական չափանիշներ. պաշտոնական գրագրության բովանդակային առանձնահատկություններ. պաշտոնական գրավոր խոսքի ոճական առանձնահատկություններ. պաշտոնական փաստաթղթի իրավական հիմքեր. փաստաթուղթ կազմելու լեզվական կանոններ: Օրենսդրական տեխնիկայի կանոններ, իրավական ակտերի բնույթի տարբերակում, նշագրում, համարակալում, այլ կանոնների ներկայացում, ակտերի կազմում, նախագծերի վերաբերյալ գրավոր կարծիքի տրամադրում: Իրավավերլուծական փաստաթուղթ կազմելու առանձնահատկություններ: Իրավավերլուծական փաստաթուղթ կազմելու եղանակներ: Իրավական հիմքերի գրության առանձնահատկություններ: Գրագրության IRAC մեթոդի կիրառում: Իրավավերլուծական ռազմավարություն, իրավավերլուծական փաստաթղթի կազմում:</p>
2.	ԸՄ-02	<p><b>Փաստաբանական գործունեության իրավական կարգավորումը և փաստաբանական էթիկա</b></p> <p>«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի հիմնական նկարագիրը: Փաստաբանական գործունեության հիմնական առանձնահատկությունները: Փաստաբանի դերն ու նշանակությունը իրավունքների ու շահերի պաշտպանության, արդարադատության իրականացման և իրավական պետության կառուցման հարցերում: Փաստաբանի վարքագծի կանոնների և փաստաբանական էթիկայի սկզբունքների ընդհանուր նկարագիր: Անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների ձեռք բերում կոնկրետ վարքագծի կանոնների և փաստաբանական էթիկայի սկզբունքների ըմբռնման և կիրառման համար: Ընդհանուր և հատուկ կանոններ: Փաստաբան և փաստաբանների պալատ փոխհարաբերությունները: Հանձնարարության ընդունում և հարաբերություններ վստահորդների հետ: Հանձնարարությունը ընդունելը բացառող հանգամանքներ: Հոնորարը և հաշտության համաձայնություն: Վստահորդի դրամական միջոցներ և մասնագիտական</p>

		<p>ապահովագրություն: Վարվելակերպի կանոնները դատարանում: Դատավորների հետ շփումներ: Փաստաբանի փոխհարաբերությունները հետաքննության, նախաքննության մարմինների, ինչպես նաև դատախազի հետ: Փաստաբանի վարքագիծը ձերբակալվածներին պահելու վայրերում, կալանավորվածներին պահելու վայրերում եւ ուղղիչ հիմնարկներում: Հարաբերությունները փաստաբանների միջև: Շփումը հակառակ կողմի հետ: Կարգապահական պատասխանատվության ծագման հիմքերը: Կարգապահական վարույթի կարգը: Պատասխանատվության միջոցներ:</p>
3.	<b>ԸՄ-03</b>	<p><b>Անհատական դիմումի քննության վարույթը ՀՀ սահմանադրական դատարանում</b></p> <p>Մարդու իրավունքների պաշտպանությունը սահմանադրական դատարանում: Անհատական սահմանադրական գանգատի ինստիտուտի հասկացությունը և առանձնահատկությունները: Սահմանադրական գանգատը ՀՀ սահմանադրական դատարանում: Անհատական դիմումին ներկայացվող նյութական և ձևական պահանջները: Անհատական դիմումը քննության ընդունելու վերաբերյալ որոշման կայացումը: Անհատական դիմումի մերժման հիմքերը: Սահմանադրական դատավարության առանձնահատկությունները: Սահմանադրական դատավարության մասնակիցները: Ներկայացուցչությունը սահմանադրական դատարանում: Դատավարության կողմերի իրավունքները և պարտականությունները: Սահմանադրական դատավարության սկզբունքները: Սահմանադրական դատավարության փուլերը: Ապացույցները սահմանադրական դատարանում: Գործի վարույթը կասեցնելը: Գործի վարույթը կարճելը: Գործերի քննության գրավոր և բանավոր ընթացակարգը: Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող վերջնական որոշումը: ՍԴ որոշումների ընդունման կարգը: ՍԴ անդամի հատուկ կարծիքը: ՍԴ որոշումներին ներկայացվող պահանջները: Անհատական դիմումի հիման վրա կայացվող ՍԴ որոշման իրավական հետևանքները: Հակասահմանադրական ճանաչված ակտի իրավական ուժը կորցնելը հետաձգելը: ՍԴ որոշմանը նախորդող իրավահարաբերությունների վրա որոշման ուժը տարածելը: ՍԴ որոշումների կատարումը. պրակտիկ հիմնախնդիրներ:</p>
4.	<b>ԸՄ-04</b>	<p><b>Մարդու իրավունքների եվրոպական դատարան դիմում ներկայացնելու գործնական հմտությունները</b></p> <p>Դատական կազմեր և բաժանմունքներ: Գործի քննության փուլերն՝ ըստ որոշում կայացնող դատական կազմերի: Գործի քննության գրավոր և բանավոր ընթացակարգերը՝ ըստ Դատարանի կանոնակարգի: Երրորդ կողմի մասնակցությունը գործի քննությանը: Միջանկյալ միջոցների կիրառման կարգը: Հրատապ դիմումներ: Պիլոտային գործեր: Դատավարության լեզու, ներկայացուցչություն, դատական ծախսեր: Մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական մեխանիզմի ընդհանուր բնութագիրը: Անընդունելիության ընթացակարգային հիմքերը:</p>

		Անընդունելիության հիմքերը՝ ըստ դատարանի իրավագրության: Անընդունելիություն՝ հիմնված գանգատի ըստ էության քննության վրա: Դատարան ներկայացվող դիմումի ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները: Դիմումի ձևաթղթի ներկայացում: Այլ փաստաթղթերի ձևաթղթերի ներկայացում: Դատարանի դատաբազայում նախադեպերի որոնում:
5.	<b>ԸՄ-05</b>	<p><b>Փաստաբանական գրասենյակի կառավարման առանձնահատկությունները</b></p> <p>Փաստաբանությունը որպես առևտրային գործունեություն և որպես իրավապաշտպան գործունեության տեսակ: Առևտրային կազմակերպական իրավական ձևեր: Ոչ առևտրային կազմակերպական իրավական ձևեր: Կոնկրետ գրասենյակի համար օպտիմալ կազմակերպական-իրավական ձևի ընտրության մեթոդաբանությունը: Գրասենյակի ներքին կառուցվածքը, թիմերը և թիմային աշխատանքը: Աշխատավարձերը և խրախուսման այլ միջոցները: Փաստաբանական ծառայությունների համար վճարը: Փաստաբանի հոնորարը: Գնագոյացում: Փաստաբանական գրասենյակի աշխատակազմի ընտրություն և կառավարում: Աշխատանքի բաժանում: Փաստաբանական ծառայությունների մարքեթինգ և վաճառք: Մարքեթինգային տարբեր մոդելների արդյունավետությունը: Փաստաբանական գրասենյակի հաճախորդները: Վերջինների հետ վերաբերմունքի առանձնահատկությունները: Դեռնթոլոգիական խնդիրները գրասենյակի կառավարման հարցում: Հաճախորդների հետ կնքվող պայմանագրերի առանձնահատկությունները:</p>
6.	<b>ԸՄ-06</b>	<p><b>Արդյունավետ հաղորդակցման հմտություններ</b></p> <p>Հաղորդակցման տեսակները, եղանակները և գործիքները: Միջանձնային հաղորդակցման և բանակցության առանձնահատկությունները: Արդյունավետ հաղորդակցման խոչընդոտող գործոնները, դրանց կանխարգելումը և չեզոքացումն ըստ հաղորդակցման տեսակների: Հոգեբանական ներազդեցությունը գործնական հաղորդակցման ընթացքում:</p>
7.	<b>ԸՄ-07</b>	<p><b>Սթրեսի և Ժամանակի կառավարում</b></p> <p>Սթրեսի ընդհանուր բնութագիրը: Սթրեսային վիճակի առաջացման պաճտառներ, տեսակներ, փուլեր: Սթրեսին ուղեկցող բացասական հոգեվիճակներ: Մասնագիտական սթրես: Փաստաբանների աշխատանքի ընթացքում ձեռք բերված սթրես: Ինքնավերահսկում սթրեսի կառավարման գործընթացում: Սթրեսակայունություն, սթրեսի հաղթահարման ուղիներ: Ժամանակի կառավարման սկզբունքներ և ռազմավարություն: Ժամանակի կառավարման մեթոդներ: Ժամանակի պլանավորում:</p>
8.	<b>ԸՄ-08</b>	<p><b>Իրավական էլեկտրոնային ռեսուրսներ</b></p> <p>Էլեկտրոնային ռեսուրսների ներկայացում: Որոնման չափորոշիչներ: ՄԻԵԴ որոշումների որոնում՝ կիրառելով ֆիլտրերը, ըստ բանալի բառերի և չափանիշների (այդ թվում՝ հայերեն), ՄԻԵԴ դիմելու վերաբերյալ ուղեցույցներ(այդ թվում՝ հայերեն), որոշ փաստաթղթերի ձևանմուշների</p>

		ուսումնասիրում, վերաբերելի ՀՀ դատական ակտերի, ՍԴ որոշումների որոնում, վերաբերելի ՀՀ իրավական ակտերի որոնում: Տարբեր կայքերի հնարավորությունների ներկայացում:
9.	<b>ԸՄ-09</b>	<b>Դատավորի էթիկա</b> Դատավորի վարքագծի կանոններ: Պրակտիկայում դատավորների կողմից առավել հաճախ դրսևորվող խախտումների վերլուծություն: Դատավորի վարքագիծը վարույթներից դուրս: Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթի հիմքերը: Կարգապահական վարույթ հարուցելու կարգն ու պայմանները: Կարգապահական վարույթ հարուցելու դիմումը փաստաբանի կողմից: Կարգապահական վարույթների հարուցման ժամկետներն ու կարգապահական պատասխանատվությունը:
10.	<b>ԸՄ-10</b>	<b>Հակակոռուպցիոն կառուցակարգեր. արդի հարցեր</b> Կոռուպցիայի հասկացությունը, պատմությունը, տիպաբանությունը և հակակոռուպցիոն պայքարի փուլերը: Հակակոռուպցիոն միջազգային նախաձեռնություններ և իրավական փաստաթղթեր: Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգ, կոռուպցիայի դեմ պայքարի հիմնասյուները: Կոռուպցիայի կանխարգելումը հանրային և մասնավոր հատվածներում: Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման եվ իրական սեփականատերեր: Կոռուպցիոն բնույթի հանցագործություններ, միջազգային իրավական համագործակցություն և ազդարարման ինստիտուտ:
11.	<b>ԸՄ-11</b>	<b>Իրավական ապահովումը կորպորատիվ հարաբերություններում</b> Կորպորատիվ խնդիրները, դրանց վերհանման մեթոդաբանությունը և նշանակությունը: Տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտում խնդիրների վերհանում: Կազմակերպության ոչ հարկային բնույթի հնարավոր ֆինանսական խնդիրները, տարածված պայմանագրերը, ինչպես նաև խնդիրների արտապայմանագրային լուծման մեխանիզմները: Մտավոր սեփականության ոլորտում խնդիրների վերհանում:
12.	<b>ԸՄ-12</b>	<b>Դատավորի և դատախազի էթիկա</b> Դատավորի և դատախազի վարքագծի կանոնների ներկայացում: Պրակտիկայում դատավորների և դատախազների կողմից առավել հաճախ դրսևորվող խախտումների վերլուծություն: Դատավորի և դատախազի վարքագիծը վարույթներից դուրս: Դատավորի և դատախազի նկատմամբ կարգապահական վարույթի հիմքերը: Կարգապահական վարույթ հարուցելու կարգն ու պայմանները: Կարգապահական վարույթ հարուցելու դիմումը փաստաբանի կողմից: Կարգապահական վարույթների հարուցման ժամկետներն ու կարգապահական պատասխանատվությունը:
13.	<b>ԸՄ-13</b>	<b>Սիմուլյացիոն դատավարության մասնակիցների հոգեբանական անալիզ</b> Վերբալ հաղորդակցության ուսումնասիրություն: Գրավոր և բանավոր խոսք: Ոչ վերբալ հաղորդակցության տիպերը: Մարմնի լեզու: Ինքնաներկայացում: Փաստաբանի գործունեության հոգեբանություն: Փաստաբանի ճառ: Կինեսիկա: Պրոքսեմիկա: Տաքտիկա: Պրոդուսիկա: Էքստրալինգվիստիկա: Սեփական պրոֆիլի կազմում:

14.	<b>ԸՄ-14</b>	<p><b>Փաստարկում և ճարտասանություն</b></p> <p>Դատական հոետորիկա: Փաստարկման և հոետորիկայի ընդհանուր բնութագիրը: Ավանդական և ժամանակակից ըմբռնումներ:</p> <p>Կանոնավոր մտածողության հիմնարար սկզբունքները: Ապացուցման և հերքման էությունը, կանոններն ու եղանակները: Սահմանման տեսակներն ու կանոնավորության պայմանները: Մտքի ոչ բացահայտ ձևերը: Համատեքստային ու ենթատեքստային գործոնները: Նախնական համաձայնության սկզբունքը: Փաստարկների օպտիմալության սկզբունքը: Ճիշտ լսել-հասկանալու կարևորությունը: Վեճի հնդկական կանոնը: Հարց ու պատասխանի մշակույթ: Խոսքի մշակույթ: Խոսքի արտաքերականական որակները: Կրկնություն: Պատկերավոր խոսք: Հոետորական հարց: Աստիճանավորում: Հակադրություն: Բուներանգ կամ հակադարձ հարված: Հիպերբոլաներ և մեյոզիսներ: Հումոր և սրամտություն: Ելույթի կառուցման եղանակները: Թույլատրելի «խորամանկություններ» կամ մարտավարական հնարքներ: Անթույլատրելի հնարքները փաստարկման և հաղորդակցման գործընթացներում: Դիմագրավման մեթոդաբանական սկզբունքները:</p>
-----	--------------	---